DOI: 10.54503/978-9939-9312-4-1-123

ՀՆԱ-ՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 2014-2023ԹԹ (ՀՀ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ)

ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՔԵՇԻՇՅԱՆ

Հայաստանի Հանրապետության համար տնտեսական կայուն աճի ապահովումը ներկայումս երկրի ռազմավարական նշանակություն ունեցող հիմնախնդիրներից է:ՀՆԱ-ի իրական աճը պայմանավորված է ոչ միայն տնտեսության առանձին ոլորտներում իրական ծավալների աճով, այլև ՀՆԱ-ում դրանց ունեցած տեսակարար կշիռների փոփոխություններով: Սույն հետազոտության նպատակն է պարզել, թե արդյոք ուսումնասիրվող տարիներին ՀՆԱ-ի կառուցվածքում տեղ գտած տեղաշարժերը էական են, և այդ տեղաշարժերը որքանով են ազդել ոլորտների իրական ծավալների ինդեքսների փոփոխության վրա, որի համար դրվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել 2019-2023թթ ՀՀ ՀՆԱ-ում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները և գնահատել դրանց ինտենսիվությունը,
- Գնահատել 2019-2023թթ ՀՀ ՀՆԱ-ի հիմնական ոլորտներում իրական ծավալների դինամիկան,
- Բացահայտել 2014-2023թթ ՀՀ ՀՆԱ-ում հիմնական ոլորտների մասնաբաժինների և իրական ծավալների փոխկախվածությունը:

Սույն հետազոտության համար ՀՆԱ-ի ոլորտները ներկայացվել է խոշորացված խմբերով՝ միավորելով միևնույն ոլորտին պատկանող առանձին ոլորտները:

Աղյուսակներ 1-ում և 2-ում ներկայացված տվյալներից երևում է, որ 2014-2023թթ ՀՀ ՀՆԱ-ի կազմում գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնաբուծության ոլորտի մասնաբաժինը տարեկան միջին հաշվով կրճատվել է 1.1 տոկոսային կետով՝ 18.1% -ից նվազելով մինչև 8.4%, իսկ իրական ծավալի ինդեքսը 2016-2022թթ չի հասել 100% շեմը, միայն 2023թ կազել է 102.9%: Արդյունաբերության և էներգետիկայի ոլորտի տեսակարար կշիռը տարեկան բարձրացել է 0.1 տոկոսային կետով, շինարարության ոլորտի իրական ծավալի ինդեքսը՝ 2.3 տոկոսային կետով, մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում իրական ծավալի ինդեքսը՝ 2.2 տոկոսային կետով: Ուսումնասիրվող տարիներին գրեթե միշտ բարձր իրական ծավալների աճ գրանցվել է մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտներում: Հարկ է նշել, որ 2020թ, COVID-19 համավարակով և արցախյան երկրորդ պատերազմով, տնտեսության հիմնական ոլորտներում գրանցվեց տնտեսական անկում, միայն իրական ծավալի աճ գրանցվեց պետական կառավարման, պաշտպանության (111.6%), իսկ նաև 2021թ առողջապահության, բնակչության սպասարկման (105.1%, 139.2%) ոլորտներում:

Աղյուսակ 1.

ՀՀ-ում ՀՆԱ-ում հիմնական ոլորտների տեսակարար կշիռները 2014-2023թթ,% [1]

Տարիներ	Գյուղ., անտառ, ձկն.	Արդյունաբ. և էներգ.	Շինարար.	Մեծածախ և մանրածախ առևտուր	Անշարժ գույքի գործ.	Մասն., գիտ/տեխ գործ. և կրթություն	Պետ. կառ.,պաշտպ.	Առողջ., բնակ. սոցապահով.	Մշակ., զվարճ.	Այլ ծառայություններ
2014թ	18.1	16.0	9.3	11.8	8.4	3.9	4.3	3.8	1.8	13.4
2015թ	17.2	16.3	9.4	10.9	8.7	4.2	4.9	3.9	3.2	12.5
2016թ	16.4	17.9	7.8	9.8	8.6	4.2	4.9	4.1	4.6	13.6
2017թ	15.0	18.5	7.3	11.1	7.8	3.8	4.7	4.2	4.6	14.5
2018թ	13.9	18.1	6.6	11.5	7.7	3.8	4.4	4.3	5.6	15.4
2019թ	11.5	18.6	6.4	11.7	7.8	3.7	4.5	4.6	5.6	16.1
2020թ	11.4	20.0	6.9	10.8	6.9	3.9	5.6	5.4	4.9	15.6
2021թ	11.4	19.8	6.5	11.0	7.5	3.9	5.1	6.8	3.1	15.7
2022թ	10.1	18.5	6.8	11.6	8.1	3.9	4.4	5.5	2.8	19.5
2023թ	8.4	16.9	6.9	12.6	8.4	4.0	5.3	5.5	2.9	20.5

[1] «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թվականի հունվար-մարտին», տեղեկատվական ամսական զեկույց, ՀՀ ՎԿ, Երևան 2024, էջ 11-14, 29էջ, «Հայաստանի ազգային հաշիվները 2023, տարեկան և եռամսյակային տվյալներ», վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Երևան 2023, էջ. 20-31, 232էջ, «Հայաստանի ազգային հաշիվները 2020, տարեկան և եռամսյակային տվյալներ», վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Երևան 2020, էջ. 20-31, 325էջ, «Հայաստանի ազգային հաշիվները 2017, տարեկան և եռամսյակային տվյալներ», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան 2017, էջ. 45-56, 278էջ

Աղյուսակ 2.

ՀՀ-ում ՀՆԱ-ում հիմնական ոլորտների իրական ծավալների ինդեքսը 2014-2023թթ,% [2]

Տարիներ	Գյուղ., անտառ, ձկն.	Արդյունաբ. և էներգ.	Շինարար.	Մեծածախ և մանրածախ առևտուր	Անշարժ գույքի գործ.	Տասն., գիտ/տեխ գործ. և կրթություն	Ղեստ. կառ.,պաշտպ.	Առողջ., բնակ. սոցապահով.	Մշակ., զվարճ.	Այլ ծառայություններ
2014թ	106.1	99.1	95.5	103.4	100.5	102.1	107.4	102.0	140.8	112.8
2015թ	113.2	106.2	96.9	91.7	100.6	100.5	107.9	99.9	171.8	97.8
2016թ	95.0	107.7	85.9	105.1	89.9	99.6	100.4	99.4	127.9	108.7
2017թ	94.9	111.7	102.8	120.5	99.9	97.8	103.0	111.5	112.0	115.3
2018թ	93.1	104.9	100.6	109.3	100.0	105.5	95.7	106.9	130.1	113.3
2019թ	94.2	112.0	106.5	109.0	109.7	108.4	106.5	108.1	105.7	113.6
2020թ	96.3	98.6	94.1	86.8	80.8	96.1	116.3	105.1	80.3	91.6
2021թ	99.2	102.4	103.1	107.4	115.9	111.9	92.4	139.2	68.2	109.8
2022թ	97.2	106.9	118.6	117.6	107.9	115.4	98.4	97.8	108.0	140.3
2023թ	102.9	100.0	116.0	123.4	100.7	106.8	127.8	104.4	116.3	109.4

ՀՀ տնտեսությունում COVID-19 համավարակի և արցախյան երկրորդ պատերազմի ազդեցությունը գնահատելու նպատակով ՀՆԱ-ի հիմնական ոլորտների կառուցվածքային տեղաշարժերի և իրական ծավալների ինդեքսների դինամիկայի ինտենսիվության վերլուծությունը իրականացնելիս 2019թ, 2020թ և

[2] Խոշորացված ոլորտներով ՀՆԱ-ի իրական ծավալի ինդեքսները հաշվարկվել են հեղինակների կողմից

2023թ համար նախ համեմատման բազա է ընդունվել 2014թ, ապա միմյանց հետ համեմատվել են 2019-2020թթ, 2020թ և 2023թ ցուցանիշները: Սոցիալ-տնտեսական երևույթների կազմի ու կառուցվածքի վիճակագրական վերլուծության մեջ կարևորվում է կառուցվածքային տեղաշարժերի ինտենսիվության վերլուծությունը: Կառուցվածքային տեղաշարժերի ինտենսիվության ցուցանիշները թույլ են տալիս գնահատել ոչ թե առանձին մասերի տեսակարար կշիռի փոփոխությունը, այլ ժամանակի կամ տարածության մեջ ուսումնասիրվող համակցության ընդհանուր կառուցվածքում տեղ գտած տեղաշարժերի ինտենսիվության բնույթը: Կառուցվածքային տեղաշարժերի ինտենսիվությունը բնութագրվում են մի շարք ցուցանիշներով, որոնցից են՝

Կառուցվածքի քառակուսային տեղաշարժը՝

$$\sigma_d = \sqrt{\frac{\sum_{i=1}^{k}(d_{1i}-d_{0i})^2}{k}} \qquad (2),$$

Կառուցվածքի քառակուսային տեղաշարժի ցուցանիշը համեմատվում է 2-ի հավասար սահմանային հնարավոր արժեքի հետ, իսկ տեղաշարժերի առավելագույն հնարավոր մեծությունը որոշվում է հետևյալ կերպ՝

$$\sigma_{d(max)} = \sqrt{\frac{2}{k}} \qquad (3),$$

Կառուցվածքային տեղաշարժերի միջին գծային հարաբերական մեծություն՝

$$I_d = \frac{\sum_{i=1}^{k}\left|\frac{d_{1i}-d_{0i}}{d_{0i}}\right|}{k} \qquad (4),$$

Կառուցվածքային տեղաշարժերի ինտենսիվության գնահատման ցուցանիշ ըստ Գատևի, որքան այն մոտ է մեկին, այնքան կառուցվածքային տեղաշարժերը եղել են ավելի ինտենսիվ՝

$$K_Գ = \sqrt{\frac{\sum_{i=1}^{k}(d_{1i}-d_{0i})^2}{\sum_{i=1}^{k} d_{0i}^2+\sum_{i=1}^{k} d_{1i}^2}} \qquad K_Գ \in [0;1] \qquad (5),$$

որտեղ՝

d_{0i} և d_{1i} – համապատասխանաբար բազիսային և հաշվետու ժամանակահատվածներում ուսումնասիրվող սոցիալ-տնտեսական երևույթի կառուցվածքի մասնաբաժիններն են,

k - մասնաբաժինների քանակն է [6]:

ՀՆԱ-ի առանձին ոլորտների իրական ծավալների ինդեքսի փոփոխությունների ինտենսիվության գնահատականը տալու համար կիրառվել է ռանգային փոփոխությունների ինտենսիվության ցուցանիշները: Ռանգերի փոփոխության գծային գործակիցը բնութագրում է կառուցվածքի ռանգերի բացարձակ փոփոխության առավելագույն տոկոսային չափը, այն որոշվում է հետևյալ կերպ՝

Զույգ թվով մասերի դեպքում՝ $KR = \frac{\sum_{i=1}^{n}|R_{d1}-R_{d0}|}{n^2:2}$ (6):

Կենտ թվով մասերի դեպքում՝ $KR = \frac{\sum_{i=1}^{n}|R_{d1}-R_{d0}|}{(n^2-1):2}$ (7) [6,626]:

Կառուցվածքների ռանգային փոփոխության քառակուսային գործակիցը հաշվարկվում է Սպիրմենի ռանգային կոռելյացիայի գործակցի հիման վրա.

$$KRK = \frac{3\times\sum_{i=1}^{n}(R_{d1}-R_{d0})^2}{n^3-n} \quad (8),$$

որտեղ՝

R_{d0} և R_{d1}- բազիսային և հաշվետու տարիներին կառուցվածքի ռանգերն են,

n - մասնաբաժինների թիվն է:

Աղյուսակ 3

ՀՆԱ-ի կառուցվածքային տեղաշարժերի ինտենսիվության գնահատականները 2014-2023թթ, ըստ տարիների[3]

Ցուցանիշ	$2019/2014$	$2020/2014$	$2023/2014$	$2020/2019$	$2023/2020$
Կառուց. Քառակուս. տեղաշարժ	$\sigma_d = 0.028$ ($\sigma_{max} = 0.447$)	$\sigma_d = 0.029$ ($\sigma_{max} = 0.447$)	$\sigma_d = 0.039$ ($\sigma_{max} = 0.447$)	$\sigma_d = 0.008$ ($\sigma_{max} = 0.447$)	$\sigma_d = 0.022$ ($\sigma_{max} = 0.447$)
Կառուց. տեղաշ. միջին գծային հարաբ. մեծություն	$I_d = 35.4\%$	$I_d = 37.5\%$	$I_d = 27.6\%$	$I_d = 9.8\%$	$I_d = 16.2\%$
Կառուց. տեղաշ. ինտենսիվ. գնահատ. ըստ Գատևի	$K_գ = 0.19$	$K_գ = 0.20$	$K_գ = 0.26$	$K_գ = 0.05$	$K_գ = 0.15$

ՀՀ-ում ՀՆԱ-ն արտադրական եղականով ձևավորվում է թվով 21 ոլորտներում համախառն ավելացված արժեքների հիման վրա: Ոլորտների վերախմբավորման արդյունքում ձևավորվել են 10 խմբեր, որի դեպքում կառուցվածքային քառակուսային տեղաշարժերի գործակցի առավելագույն հնարավոր արժեքը կազմում է 0.447 ($\sigma_{d(max)} = \sqrt{\frac{2}{10}} = 0.447$): Կառուցվածքային քառակուսային տեղաշարժերի գործակիցների համաձայն, 2019թ 2014թ համեմատությամբ այն կազմել է առավելագույն հնարավոր տեղաշարժի 6.4%-ը, 2020թ՝ 6.7%-ը, 2023թ՝ 8.8%-ը, 2019-2020թթ՝ 1.7%-ը և 2020-2023թթ՝ 5.1%-ը: Կատարված հաշվարկների վերլուծությունները ցույց են տվել, որ ՀՀ-ում ՀՆԱ-ում հիմնական ոլորտների մասնաբաժինների առավել նշանակալի տեղաշարժեր գրանցվել են միջև 2020թ, իսկ 2020-2023թթ կառուցվածքային տեղաշարժերը եղել են ոչ ինտենսիվ:

[3] Աղյուսակը կազմվել է հեղինակների կողմից

ՀՆԱ-ի կազմում վերախմբավորված ոլորտների իրական ծավալների ինդեքսների փոփոխության ինտենսիվության գնահատման նպատակով իրականացվել է ոլորտների ռանգավորում՝ ըստ իրական ծավալի ինդեքսների։ Միմյանց հետ համեմատվել են նշված տարիներին ռանգերը և հաշվարկվել դրանց փոփոխության ինտենսիվությունը բնութագրող ցուցանիշները։

Աղյուսակ 4

ՀՀ ՀՆԱ-ի ոլորտների իրական ծավալի ինդեքսների ռանգային փոփոխությունների գործակիցները 2014թ և 2019-2023թթ.[4]

Ցուցանիշ	$2019/2014$	$2020/2014$	$2023/2014$	$2020/2019$	$2023/2020$
Ռանգերի փոփոխության գծային գործակից	KR = 0.076 7.6%	KR = 0.072 7.2%	KR = 0.044 4.4%	KR = 0.072 7.2%	KR = 0.068 6.8%
Ռանգային փոփոխության քառակուսային գործակից	KRK = 0.642	KRK = 0.6	KRK = 0.242	KRK = 0.581	KRK = 0.558

Աղյուսակ 4-ում ներկայացված վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ 2014թ նկատմամբ 2019թ, 2020թ և 2023թ նշված ոլորտների ռանգերի փոփոխությունները ըստ իրական ծավալների ինդեքսների եղել են նշանակալի, իսկ 2020թ հաջորդող ժամանակահատվածում, միայն 2023թ՝ 2020թ համեմատությամբ։

2014-2023թթն ՀՆԱ-ի հիմնական ոլորտների տեսակարար կշիռների և դրանց իրական ծավալի ինդեքսների միջև փոխկախվածությունը ներկայացվել է տնտեսաչափական մոդելների միջոցով։ Ուսումնասիրվող ցուցանիշների միջև նշանակալի կապեր ձևավորվել են մի քանի ոլորտներում, և այդ կապերը հիմնականում ներկայացվել են երկրորդ կարգի պարաբոլի տեսքի ռեգրեսիոն մոդելների միջոցով՝

$$\widehat{y_t} = a + bx_t + cx_t^2 \qquad (9),$$

y_t- տնտեսության հիմնական ոլորտների իրական ծավալի ինդեքսն է,

x_t- ՀՆԱ-ի կազմում հիմնական ոլորտների տեսակարար կշիռն է։

Ուսումնասիրվող ցուցանիշների միջև կապը ներկայացնող երկրորդ կարգի պարաբոլային ռեգրեսիոն մոդելի ընտրությունը նախ պայմանավորված է եղել այդ ցուցանիշների միջև կապի ոչ գծային ձևով, ապա ռեգրեսիոն վերլուծության արդյունքների նշանակալիությունը փաստող չափանիշների արժեքներով։

Աղյուսակ 5-ում ներկայացված են տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռների և իրական ծավալների ինդեքսների միջև փոխկախվածության արդյունքները։

[4] Աղյուսակը կազմվել է հեղնակների կողմից

Աղյուսակ 5.

ՀՀ-ում ՀՆԱ-ում հիմնական ոլորտների տեսակարար կշիռների և դրանց իրական ծավալի ինդեքսների միջև փոխկախվածությունների արդյունքները 2014-2023թթ տվյալներով [5]

Ոլորտներ	Արդյունքներ
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնաբուծություն	$\widehat{y_t} = 177.9 - 13.12x_t + 0.513x_t^2$ $R = 0.772, R^2 = 0.596,$ $F = 5.1, (sign. = 0.04)$ $Э = 0.07\%$
Արդյունաբերություն, ներառյալ էներգետիկան	$\widehat{y_t} = -568.3 + 74.9x_t - 2.07x_t^2$ $R = 0.733, R^2 = 0.538,$ $F = 5.01, (sign. = 0.04)$ $Э = 0.03\%$
Շինարարություն	$\widehat{y_t} = 331.3 - 55.3x_t + 3.21x_t^2$ $R = 0.766, R^2 = 0.536,$ $F = 4.9, (sign. = 0.042)$ $Э = 0.56\%$
Մանրածախ, մեծածախ առևտուր	$\widehat{y_t} = 564.8 - 90.3x_t + 4.39x_t^2$ $R = 0.77, R^2 = 0.593,$ $F = 5.01, (sign. = 0.04)$ $Э = 0.92\%$
Անշարժ գույքի հետ կապված գործունեութ	$\widehat{y_t} = -1687.1 + 454.1x_t - 28.6x_t^2$ $R = 0.822, R^2 = 0.678,$ $F = 7.3, (sign. = 0.01)$ $Э = 0.22\%$
Առողջապահություն, բնակչության սոցիալական. սպասարկում	$\widehat{y_t} = 265.7 - 70.9x_t + 7.64x_t^2$ $R = 0.871, R^2 = 0.759,$ $F = 11.1, (sign. = 0.006)$ $Э = 0.09\%$

Աղյուսակ 5-ում ներկայացված վերլուծության արդյունքներից երևում է, որ նշված ոլորտներում 2014-2023թթ ՀՆԱ-ում ունեցած տեսակարար կշռիների և դրանց իրական ծավալի ինդեքսների միջև ձևավորվել է ուժեղ և նշանակալի կապ: Ուսումնասիրվող տարիներին ՀՆԱ-ում գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնաբուծության ոլորտի տեսակարար կշիռի մեկ տոկոսով կրճատման հետ զուգահեռ իրական ծավալի ինդեքսը ավելացել է 0.07%-ով: Նույն ժամանակահատվածում արդյունաբերության (ներառյալ էներ-գետիկան) ոլորտի ՀՆԱ-ում ունեցած մասնաբաժնի յուրաքանչյուր մեկ տոկոսով կրճատման հետ զուգահեռ իրական ծավալի ինդեքսը ավելացել է 0.07%-ով: ՀՆԱ-ում շինարարության ոլորտի տեսակարար կշիռի մեկ տոկոսով կրճատմանը զուգահեռ իրական ծավալի ինդեքսը ավելացել է 0.56%-ով: Ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՆԱ-ում մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտի մասնաբաժնի մեկ տոկոսով ավելացման հետ զուգահեռ

[5] Աղյուսակը կազմել է հեղինակների կողմից

իրական ծավալի ինդեքսը բարձրացել է 0.92%-ով: ՀՆԱ-ում անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտի տեսակարար կշիռի մեկ տոկոսով ավելացման հետ զուգահեռ իրական ծավալի ինդեքսը բարձրացել է 0.22%-ով: Ուսումնասիրվող տարիներին ՀՆԱ-ում առողջապահության, բնակչության սոցիալական սպասարկման ոլորտի տեսակարար կշիռի մեկ տոկոսով ավելացման հետ զուգահեռ իրական ծավալի ինդեքսը բարձրացել է 0.09%-ով:

Եզրակացություններ

- Ըստ ոլորտների ՀՆԱ-ում կառուցվածքային հարաբերականորեն ինտենսիվ տեղաշարժեր են գրանցվել 2020 և 2023 թվականներին՝ 2014թ հետ համեմատած,
- Ուսումնասիրվող ժամանակահատվածում շղթայական վերլուծության արդյունքնում ՀՆԱ-ում կառուցվածքային տեղաշարժերը նշանակալի չեն եղել:
- Ուսումնասիրվող տարիներին ՀՆԱ-ում ոլորտների իրական ծավալների ինդեքսների ռանգային նշանակալի փոփոխություններ գրանցվել են միայն 2020թ հետ համեմատելիս, որը պայմանավորված է եղել COVID-19 համավարակով և արցախյան երկրորդ պատերազմով: Մյուս համեմատվող տարիներին ըստ ոլորտների իրական ծավալի ինդեքսների ռանգային էական փոփոխություններ չեն գրանցվել:
- ՀՆԱ-ում ըստ ոլորտների կառուցվածքային էական տեղաշարժեր և դրանցում իրական ծավալի ինդքսների ռանգային էական փոփոխություններ փոփոխություններ չեն գրանցվի նաև առաջիկա տարիներին, եթե մի քանի ոլորտներում (կրթության, գիտահետազոտական ոլորտներում, ծառայությունների որոշ ենթաոլորտներում) չկատարվեն հիմնավորված և արդյունավետություն ապահովող ներդրումներ կամ չիրականացվեն թիրախավորված պետական աջակցության ծրագրեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թվականի հունվար-մարտին», տեղեկատվական ամսական զեկույց, ՀՀ ՎԿ, Երևան 2024, էջ 11-14, 29էջ
2. «Հայաստանի ազգային հաշիվները 2023, տարեկան և եռամսյակային տվյալներ», վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Երևան 2023, էջ. 20-31, 232էջ
3. «Հայաստանի ազգային հաշիվները 2020, տարեկան և եռամսյակային տվյալներ», վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Երևան 2020, էջ. 20-31, 325էջ
4. «Հայաստանի ազգային հաշիվները 2017, տարեկան և եռամսյակային տվյալներ», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան 2017, էջ. 45-56, 278էջ

5. “A review of the use of price index in national accounts”, Vu Quang Viet, Workshop on the methodological review of benchmarking, rebasing and chain-linking of economic indicators, Jointly organized by: United nations statistics division (UNSD), Lao Department of Statistics (DOS) 24 – 26 August 2011, Vientiane, Lao People’s Democratic Republic, 14p., p.11-12
6. Елисеева И.И., Юзбашев М.М. Общая теория статистики: Учебник/Под ред.И.И. Елисеевой.-5-е изд., перераб. и доп.-М.: Финансы и статистика, 2004.-656с. Ст.623-624

ՀՆԱ-ՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 2014-2023ԹԹ (ՀՀ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ)

ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՔԵՇԻՇՅԱՆ

Համառոտագիր: Անկախության տարիներից ի վեր Հայաստանի Հանրապետությունում տնտեսական աճի և տնտեսական կայուն զարգացման ապահովումը արդիական հիմնախնդիրներից է, որն առանցքային դեր է ստանձնում ներկայիս ձևավորված տարածաշրջանային տնտեսա-քաղաքական, ինչպես նաև գլոբալ մարտահրավերների պայմաններում: Տնտեսության հիմնական ոլորտների կայուն զարգացման ապահովումը հիմք է ստեղծում երկրի տնտեսական աճի ապահովման համար: Սույն հոդվածը նվիրված է 2014-2023թթ . ՀՀ ՀՆԱ-ում տնտեսության առանձին ոլորտների կառուցվածքային տեղաշարժերի, ինչպես նաև այդ ոլորտների իրական ծավալների ինդեքսների փոփոխության ինտենսիվության և դրանց փոխկախվածությունների գնահատմանը: 2020-2021թթ ՀՀ-ում նախ COVID-19 համավարակի, ապա երկրորդ արցախյան պատերազմի արդյունքում գրանցվեց տնտեսական անկում, մի շարք ոլորտներում նվազագույն մակարդակին մոտ տնտեսական ցուցանիշներ: Հաջորդող տարիներին ՀՀ-ում գրանցվեց տնտեսական աճ: Հոդվածում տրվել է մինչ COVID-19 համավարակի և երկրորդ արցախյան պատերազմի, դրան հաջորդող տարիներին տնտեսության հիմնական ոլորտների իրական ծավալների, ինչպես նաև ՀՆԱ-ում դրանց ունեցած տեսակարար կշիռների փոփոխության վիճակագրական գնահատականը և ազդեցությունը այդ ոլորտներում գրանցված իրական ծավալների աճի վրա: տրվել է դրա նշանակալիության գնահատականը:

Բանալի բառեր: ՀՆԱ, կառուցվածքային տեղաշարժեր, իրական ծավալի ինդեքս, ռանգերի փոփոխության գործակից, տնտեսական աճ, ռեգրեսիոն վերլուծություն:

ОЦЕНКА ДИНАМИКИ СТРУКТУРНЫХ ИЗМЕНЕНИЙ ВВП И ПОКАЗАТЕЛЕЙ РЕАЛЬНОГО ОБЪЕМА В КЛЮЧЕВЫХ СЕКТОРАХ В 2014-2023 (ПО ДАННЫМ РА)

ГОАР ВАРДАНЯН
ГЕВОРГ КЕШИШЯН

АННОТАЦИЯ. Обеспечение экономического роста и устойчивого экономического развития является одной из актуальных задач Республики Армения (РА). На сегоднящий день этот вопрос имеет жизненно важное значение в рамках региональной экономической и политической ситуации, а также среди глобальных стратегических вызовов. Устойчивое развитие основных сфер экономики – основа экономическ ŋого роста. Научная статья посвящена оценке структурных сдвигов ВВП и изменений индексов реального объемов ВВП в период 2019-2022 годов. В период 2020-2021 из-за пандемии COVID-19 и второй арцахской войны реальный объем ВВП РА сократился. Минимальные значения экономических показателей также сложились и в ряде сфер экономики страны. В 2021-2022 годах в РА наблюдался экономический рост. В данной статье за исследуемые годы намы дана статистическая оценка изменений индексов реального объема и структурных сдвигов ВВП РА. В статье исследовано влияние

INTENSITY ASSESSMENT OF DYNAMICS IN THE STRUCTURAL CHANGES AND REAL VOLUME INDICES IN MAIN GDP SECTORS OF RA (2014-2023)

GOHAR VARDANYAN
GEVORG QESHISHYAN

ABSTRACT. The providing of economic growth and economic sustainable development is one of the ongoing issues for Republic of Armenia (RA). Today this issue has the vital role in the frame of the regional economic, political situation and among the global challenges as well. The sustainable development of the main spheres of the economy is the base for the economic growth. Hereby scientific article is dedicated to the assessment of the structural shifts in the GDP and the changes of the real value indices of the spheres of GDP in the period of 2019-2022. In 2020-2021 because of COVID-19 pandemic and the second artsakh war the GDP of RA decreased. The minimum values of economic indicators were in the several spheres of economy. In 2021-2022 there was economic growth in RA. During the studied years the statistical assessment of the changes of the real volume indices and the structural shifts of the spheres of GDP of RA have been presented in this research. The influence of the structural shifts of the spheres of economy and their real volume indices, as well as its statistical assessment has been presented in this article.

Keywords. GDP, the structural shifts, real volume index, the coefficient of the changes of ranks, economic growth, regression analysis.